UNITED STATES DISTRICT COURT FOR THE NORTHERN DISTRICT OF CALIFORNIA

Եթե Դուք «Medi-Cal»-ի անդամ եք և «Adult Day Health Care» (ADHC) եք ստանում (կամ վերջերս ստացել եք), սա «Notice of a Class Action Settlement» (խմբահայցի կապակցությամբ կայացված հաշտության համաձայնության մասին ծանուցում) է, որը կարող է ազդել Ձեզ վրա:

Այս ծանուցումն արտոնված է դաշնային դատարանի կողմից: Այն որևէ փաստաբանի միջնորդություն չէ:

Հայց է ներկայացվել Դատարան, խնդրելով թույլ չտալ California-ին դադարեցնել «Medi-Cal»-ի ADHC ծրագիրն այնքան ժամանակ, մինչև այլ ծառայություններ չգործեն ADHC-ի ծառայություններ ստացողների համար: Դատավեճի կողմերը հաշտության համաձայնություն են կնքել այս հարցի կապակցությամբ: Եթե հաշտության համաձայնությունը հաստատվի Դատարանի կողմից, ապա ADHC ծրագիրը կդադարեցվի 2012 թ. փետրվարի 29-ին: 2012 թ. մարտի 1-ից սկսած Դուք այլ ծառայություններ կստանաք՝ կախված Ձեր վիճակից: Ստորև շարադրված է տրամադրվելիք ծառայությունների ամբողջական նկարագրությունը և բացատրվում է, թե ով ինչ ծառայություններ կարող է ստանալ: Բացի այդ, տեղեկություններ են տրամադրվում «Հաշտության համաձայնության» մասին, որոնք պետք է որ պատասխանեն այդ մասին Ձեր ունեցած հարցերին, ինչպես նաև նշված է, թե Դուք ում կարող եք դիմել լրացուցիչ հարցերի դեպքում:

Այս Հաշտության համաձայնությունը չի ազդի Ձեր նախնական բուժսպասարկողին տեսնելու Ձեր իրավունքի վրա, եթե ներկայումս Դուք «Medicare»-ի անդամ եք: Հաշտության համաձայնությամբ տրամադրվելիք ծառայությունները Դուք ստանալու եք ի լրումն ներկա պահին «Medicare»-ի միջոցով Ձեզ տրամադրվող ծառայությունների:

Այս դատական գործը դրամական վնասի փոխհատուցման գործ չէ:

Դատարանը դեռ պետք է որոշում կայացնի Հաշտության համաձայնությունը հաստատելու մասին:

Այս ծանուցման մեջ բացատրվում են Ձեր իրավունքները և ընտրությունները (և դրանց կապակցությամբ քայլերի դիմելու վերջնաժամկետները):
ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՄԲ ԿԱՐԴԱՑԵՔ ԱՅՍ ԾԱՆՈՒՑՈՒՄԸ:

Ձեր օրինական իրավունքները և ընտրությունները այս հաշտության համաձայնության կապակցությամբ	
Ոչինչ չանել	Եթե Դուք ոչինչ չանեք, Դատարանը որոշում կկայացնի Հաշտության համաձայնության կապակցությամբ՝ առանց հաշվի առնելու Ձեր դիտողությունները: Դուք կզրկվեք ADHC ծրագրի դադարեցումը բողոքարկելու այլ հայց ներկայացնելու իրավունքից: Եթե ներկայումս Դուք ստանում եք ADHC-ի ծառայություններ, ապա այս Հաշտության համաձայնությամբ ստեղծվող ծառայությունները ստանալու համար Ձեզ անհրաժեշտ չէ պատասխանել այս Ծանուցմանը:
Գրավոր առարկություն ներկայացնել մինչև 2012 թ. հունվարի 10-ը	Դատարանին գրեք այն մասին, թե ինչու Ձեզ դուր չի գալիս Հաշտության համաձայնությունը: Բացի այդ, Դուք կարող եք խոսք խնդրել՝ դատարանում Ձեր առարկությունները ներկայացնելու համար: Որպեսզի Դատարանը հաշվի առնի Ձեր առարկությունը, այն հարկավոր է Դատարան ուղարկել 2012 թ. հունվարի 10-ը:
Ներկայացեք «Fairness Hearing»-ին՝ 2012 թ. հունվարի 24-ին	Եթե ցանկանում եք ելույթ ունենալ «Fairness Hearing»-ի ժամանակ, այդ մասին անպայման գրեք Դատարանին ուղարկվող Ձեր նամակի մեջ: Սակայն անպայման չէ, որ Դուք «Fairness Hearing»-ին ներկայանաք, որպեսզի Դատարանը հաշվի առնի Ձեր առարկությունը:

NOTICE OF CLASS ACTION SETTLEMENT AGREEMENT

(Ծանուցում խմբահայցի կապակցությամբ կայացված հաշտության համաձայնության մասին)

Darling et al. v. Douglas et al., C09-03798 SBA

1. Ինչու՞ եմ ես ստանում այս ծանուցումը

Ձեզ ուղարկվել է այս ծանուցումը, քանի որ ներկայումս Դուք ստանում եք կամ 2011 թ. հուլիսի 1-ից հետո ստացել եք «Medi-Cal»-ի «Adult Day Health Care» (ADHC) ծառայություններ, և այս Խմբի անդամ եք համարվում:

Դուք իրավունք ունեք իմանալու, թե ինչ հաշտության համաձայնություն է առաջարկվում այս դատավեճի կարգավորման համար, և Դուք ինչ իրավունքներ ունեք՝ նախքան Դատարանը Հաշտության համաձայնությունը հաստատելու կապակցությամբ վճիռ կկայացնի: Այս ծանուցման մեջ բացատրվում է դատական գործը, այն թե Խմբի անդամներն ինչ կստանան, եթե Դատարանը հաստատի Հաշտության համաձայնությունը, և Ձեր օրինական իրավունքները Հաշտության համաձայնության կապակցությամբ:

Այս դատական գործը լսվում է «United States District Court for the Northern District of California»-ի կողմից: Դատական գործը կոչվում է «*Darling et al. v. Douglas et al.*»: Գործի համարն է C09-03798 SBA: ADHC-ի յոթ մասնակիցները, որոնք դատարան են դիմել, կոչվում են Հայցվորներ, իսկ Պատասխանողներն են «Department of Health Care Services»-ը (DHCS) և վերջինիս տնօրենը՝ Director Toby Douglas-ը: ADHC-ի ծառայություններ ստացող մնացած բոլոր անձինք կոչվում են Խմբի անդամներ:

2. Ինչի՞ մասին է այս դատական գործը

2009 թ. «Medi-Cal»-ի «Adult Day Health Care» (ADHC) ստացողները (Հայցվորները) դատի տվեցին Պատասխանողներին: Նրանք Դատարանին խնդրեցին թույլ չտալ Պատասխանողներին կրճատել ADHC-ի ծառայությունները, և դատարանը բավարարեց նրանց պահանջը: 2011 թ. Հայցվորները Դատարանին խնդրեցին թույլ չտալ Պատասխանողներին դադարեցնել ADHC-ի նպաստը: Նրանք պնդում են, որ մինչև Պատասխանողները ADHC-ի ծառայությունները փոխարինող ծառայություններ չառաջարկեն, ծրագիրը դադարեցնելը կխախտի «Americans with Disabilities Act»-ի (ADA) և այլ օրենքների պահանջները: Նահանգային Պատասխանողները համաձայն չեն այդ փաստարկների հետ:

3. Ինչու՞ է սա խմբահայց

Խմբահայցի դեպքում մեկ կամ մի քանի հոգի, որոնք կոչվում են Խմբի ներկայացուցիչներ կամ Հայցվորներ, դատարան են դիմում նմանատիպ պահանջներ ունեցող անձանց անունից: Նրանք բոլորը Խմբի անդամներ են: Խմբի բոլոր անդամների համար վճիռը կայացվում է մեկ դատարանի կողմից: Մեր դեպքում՝ Esther Darling-ը և անձամբ հանդես եկող այլ Հայցվորներ դատարան են դիմել «Medi-Cal»-ի ADHC-ի նպաստ ստացող բոլոր անձանց անունից: Այս հարցով դատարանի ընդունած ցանկացած որոշում կազդի Խմբի բոլոր անդամների վրա:

4. Ինչու՞ է հաշտության համաձայնություն կայացվել

Հայցվորները և Պատասխանողները հաշտության համաձայնություն են կնքել, որով համատեղ ADHC ծրագիրը փոխարինող նոր ծրագրեր են մշակել: Խմբի ներկայացուցիչները և Հայցվորների փաստաբաններն այս Հաշտության համաձայնությունն արդարացի են համարում: **Հաշտության համաձայնությունը հաստատելու նպատակով 2012 թ. հունվարի 24-ի ցերեկվա ժամը 1-ին Oakland-ի «U.S. District Court»-ում «Fairness Hearing» է տեղի ունենալու: Դատալսման մասին լրացուցիչ տեղեկությունների համար կարդացեք ստորև՝ 14-17-րդ հարցերը:**

NOTICE OF CLASS ACTION SETTLEMENT AGREEMENT

(Ծանուցում խմբահայցի կապակցությամբ կայացված հաշտության համաձայնության մասին)

Darling et al. v. Douglas et al., C09-03798 SBA

5. Ինչպե՞ս իմանամ, որ ես Հաշտության համաձայնության մաս եմ կազմում

Եթե Դուք համապատասխանում եք ստորև բերված նկարագրությանը, ապա Դուք Խմբի անդամ եք և Հաշտության համաձայնության մաս եք կազմում.

> «State of California-ում «Medi-Cal»-ի բոլոր այն նպաստառուները, որոնց «Adult Day Health Care»-ի նպաստները դադարեցվելու են՝ «Assembly Bill 97»-ի (AB 97) համաձայն, այդ թվում՝ այն անձինք, ովքեր համապատասխանել են կամ կհամապատասխանեն ADHC-ի ներկայումս գործող իրավասության կամ բժշկական անհրաժեշտության պահանջներին՝ Հաշտության համաձայնության ուժի մեջ մտնելու օրվանը նախորդող ցանկացած պահի, կամ կհամապատասխանեն «Community Based Adult Services»-ի (CBAS) իրավասության կամ բժշկական անհրաժեշտության պահանջներին՝ այս Պայմանագրի ավարտին նախորդող ցանկացած պահի:»

Դա նշանակում է, որ Հաշտության համաձայնությունը տարածվում է Ձեզ վրա, եթե AB 97-ի համաձայն՝ «Medi-Cal»-ի Ձեր ADHC-ի նպաստը դադարեցվելու էր, կամ եթե մինչև 2012 թ. մարտի 1-ը Դուք համապատասխանեք ADHC ստանալու պահանջներին: Այսինքն՝ Հաշտության համաձայնությունը տարածվում է նոր ծրագրի՝ CBAS-ի պահանջներին համապատասխանող անձանց վրա: AB 97-ը նոր օրենք է, որը վերացրել է ADHC-ն՝ որպես «Medi-Cal»-ի նպաստ:

6. Ի՞նչ է տալիս Հաշտության համաձայնությունը

Ըստ Հաշտության համաձայնության՝ DHCS-ը «Community Based Adult Services» (CBAS) անունով «Medi-Cal»-ի նոր ծրագիր է ստեղծելու:

- CBAS-ը «Medi-Cal» ստացող՝ ծրագրի պահանջներին համապատասխանող անձանց մեկ տեղից մասնագիտացված բուժքույրական խնամք, սոցիալական ծառայություններ, բուժումներ, անձնական խնամք, ընտանեկան/խնամողի պատրաստություն և աջակցություն, սնունդ, փոխադրամիջոց և գործի կառավարման ծառայություններ ստանալու հնարավորություն է տալիս:
- CBAS-ը կտրամադրվի ADHC-ի որոշ նախկին կենտրոններում, որոնք արտոնվել են DHCS-ի կողմից՝ որպես CBAS-ի սպասարկողներ:
- CBAS-ը սկսվելու է 2012 թ. մարտի 1-ին:

Ըստ Հաշտության համաձայնության՝ «Գործի խորացված կառավարում» կտրամադրվի այն անձանց, ովքեր նախկինում ADHC են ստացել, բայց չեն համապատասխանում CBAS-ի պահանջներին:

- «Գործի խորացված կառավարումը» կօգնի իրավասու անձանց ADHC-ի ավարտից հետո ստանալ իրենց անհրաժեշտ բժշկական և սոցիալական ծառայությունները: Ձեր կարծիքը հաշվի կառնվի այն հարցում, թե ինչ ծառայություններ են նրանք ստանալու և ինչպես:

ADHC-ի ծառայությունները կշարունակվեն մինչև 2012 թ. փետրվարի 29-ը, որպեսզի մարդիկ ժամանակ ունենան ADHC-ի սպասարկողից սպասարկում ստանալուց անցնելու CBAS-ի սպասարկողից սպասարկում կամ «Գործի խորացված կառավարման» ծառայություններ ստանալուն: Խմբի բոլոր անդամները կա՛մ CBAS, կա՛մ «Գործի խորացված կառավարում» կստանան:

Այս դատական գործը դրամական վնասի փոխհատուցման գործ չէ, ուստի Հայցվորները կամ Խմբի անդամները վճարում չեն ստանա դատավարությանը մասնակցելու համար:

NOTICE OF CLASS ACTION SETTLEMENT AGREEMENT

(Ծանուցում խմբահայցի կապակցությամբ կայացված հաշտության համաձայնության մասին)

Darling et al. v. Douglas et al., C09-03798 SBA

7. Ի՞նչ է կատարվելու ինձ հետ՝ ըստ Հաշտության համաձայնության

- Եթե Դուք «Medi-Cal»-ի անդամ եք և ներկայումս ստանում եք ADHC՝
  - 2011 թ. դեկտեմբերից մինչև 2012 թ. փետրվարն ընկած ժամանակահատվածում կգնահատվի, թե արդյոք Դուք համապատասխանում եք CBAS ստանալու պահանջներին: ADHC-ի Ձեր սպասարկողը Ձեզ լրացուցիչ տեղեկություններ կհայտնի գնահատման գործընթացի մասին:
  - Եթե Դուք համապատասխանեք CBAS ստանալու պահանջներին, ապա անմիջապես ADHC-ի դադարեցումից հետո՝ 2012 թ. մարտի 1-ից, Դուք կսկսեք ստանալ այդ ծառայությունները:
  - Եթե Դուք չհամապատասխանեք CBAS ստանալու պահանջներին, ապա 2012 թ. փետրվարի 29-ը ADHC-ի ծառայություններ ստանալու Ձեր վերջին օրը կլինի: Դուք կսկսեք «Գործի խորացված կառավարման» ծառայություններ ստանալ, որոնք կօգնեն Ձեզ անցում կատարել Ձեզ անհրաժեշտ այլ ծառայությունների:
- Եթե Դուք «Medi-Cal»-ի անդամ եք և ներկայումս չեք ստանում ADHC՝
  - Դուք դեռ կարող եք մինչև 2012 թ. փետրվարի 29-ը դիմել ADHC-ի համար:
  - Դուք կարող եք խնդրել, որ գնահատեն CBAS ստանալու Ձեր իրավասությունը:

8. Ինչպե՞ս իմանամ, թե արդյոք ես համապատասխանում եմ CBAS ստանալու պահանջներին

Դուք կարող եք CBAS ստանալ, եթե «Medi-Cal»-ի անդամ եք ԵՎ ներկայումս համապատասխանում եք ADHC ստանալու պահանջներին ԵՎ՝

- այն չափի խնամքի կարիք ունեք, որ համապատասխանում եք «Nursing Facility Level of Care A»-ի (NF-A) պահանջներին կամ գերազանցում եք դրանք ԿԱՄ
- չափավորից մինչև ծանր մտավոր հաշմանդամություն, այդ թվում՝ չափավորից մինչև ծանր «Alzheimer's Disease» կամ այլ կարգի թուլամտություն ունեք ԿԱՄ
- զարգացման արատի հետևանք հանդիսացող հաշմանդամություն ունեք ԿԱՄ
- մեղմից մինչև չափավոր մտավոր հաշմանդամություն, այդ թվում՝ «Alzheimer's» կամ թուլամտություն ունեք և օգնության կամ հսկողության կարիք ունեք հետևյալ գործողություններից երկուսի հարցում. լոգանք ընդունել, հագնվել, ինքնուրույն սնունդ ընդունել, զուգարանից օգտվել, շարժվել, տեղաշարժվել, դեղեր ընդունել կամ անձնական հիգիենա պահպանել ԿԱՄ
- որևէ քրոնիկական հոգևոր հիվանդություն կամ ուղեղի վնասվածք ունեք ԵՎ օգնության կամ հսկողության կարիք ունեք հետևյալ գործողություններից երկուսի հարցում. լոգանք ընդունել, հագնվել, ինքնուրույն սնունդ ընդունել, զուգարանից օգտվել, շարժվել, տեղաշարժվել, դեղեր ընդունել կամ անձնական հիգիենա պահպանել. ԿԱՄ վերը նշվածներից մեկի և հետևյալ գործողություններից մեկի հարցում. տնօրինել դրամական միջոցները, օգտվել սահմանափակ հնարավորությունների տեր անձանց համար նախատեսված միջոցներից, կերակուր պատրաստել և օգտվել փոխադրամիջոցից:

NOTICE OF CLASS ACTION SETTLEMENT AGREEMENT

(Ծանուցում խմբահայցի կապակցությամբ կայացված հաշտության համաձայնության մասին)

Darling et al. v. Douglas et al., C09-03798 SBA

9. Եթե ես գնահատում անցնեմ և համապատասխանեմ ծրագրի պահանջներին, ես ինքնաբերաբար CBAS կստանա՞մ

Այո: Այն բանից հետո, երբ Ձեզ իրավասու ճանաչեն CBAS ստանալու համար, Ձեզ ցուցումներ կտրվեն այն մասին, թե ինչպես անդամագրվեք, եթե Ձեր բնակավայրում CBAS-ի կենտրոն կա: Եթե Ձեր բնակավայրում CBAS-ի կենտրոն չկա, Դուք հնարավորություն կունենաք ստանալու CBAS-ի կենտրոններում տրամադրվող ծառայությունները, բայց այլ սպասարկողներից:

- 2012 թ. մարտի 1-ից մինչև մոտավորապես 2012 թ. հուլիսի 1-ն ընկած ժամանակաշրջանում CBAS-ը կտրամադրվի սովորական «Medi-Cal»-ի միջոցով: Վերջիվերջո CBAS-ը հիմնականում տրամադրվելու է «Medi-Cal» կառավարվող բուժսպասարկման միջոցով:
- Այն բանից հետո, երբ CBAS-ը հիմնականում տրամադրվի միայն «Medi-Cal» կառավարվող բուժսպասարկման միջոցով, եթե Դուք բնակվում եք մի շրջանում, որտեղ «Medi-Cal» կառավարվող բուժսպասարկում է տրամադրվում և Դուք համապատասխանեք կառավարվող բուժսպասարկման որևէ ծրագրում ընդգրկվելու պահանջներին, Դուք կարող եք ՄԻԱՅՆ CBAS ստանալ՝ կառավարվող բուժսպասարկման միջոցով:
    - Եթե ցանկացած ժամանակ՝ մինչև 2012 թ. հուլիսի 1-ը, Դուք անդամագրվեք «Medi-Cal» կառավարվող բուժսպասարկմանը, կամ եթե Դուք արդեն անդամագրված եք «Medi-Cal» կառավարվող բուժսպասարկմանը, կառավարվող բուժսպասարկման Ձեր ծրագիրը կվճարի CBAS-ի համար, երբ այն ընդգրկվի կառավարվող բուժսպասարկման մեջ: Ձեզ հարկավոր չի լինի որևէ փոփոխություն կատարել, որպեսզի շարունակեք CBAS ստանալ:
    - Եթե Դուք կարող եք անդամագրվել «Medi-Cal» կառավարվող բուժսպասարկմանը, բայց ներկայումս անդամագրված չեք, ապա հարկավոր է անդամագրվել, որպեսզի շարունակեք CBAS ստանալ, երբ այն սկսի «Medi-Cal» կառավարվող բուժսպասարկման միջոցով տրամադրվել:
    - Եթե Դուք «Medicare» եք ստանում, ապա «Medi-Cal» կառավարվող բուժսպասարկմանն անդամագրվելը **ՉԻ** ազդի «Medicare»-ի Ձեր բժիշկներին ընտրելու Ձեր կարողության վրա:
- Եթե Դուք բնակվում եք մի շրջանում, որտեղ «Medi-Cal» կառավարվող բուժսպասարկում չի տրամադրվում, կամ չեք կարող կառավարվող բուժսպասարկում ստանալ, Ձեզ անհրաժեշտ չէ որևէ փոփոխություն կատարել, որպեսզի շարունակեք CBAS ստանալ: Դուք կարող եք շարունակել CBAS ստանալ՝ որպես սովորական «Medi-Cal»-ի նպաստ:

10. Ես կկարողանա՞մ նույն կենտրոնը հաճախել՝ CBAS ստանալու համար

Նայած, թե որ կենտրոնը: ADHC-ի շատ կենտրոններ հնարավորություն կունենան CBAS տրամադրելու: ADHC-ի կենտրոնները կարող են դիմել նահանգին՝ CBAS-ի սպասարկող դառնալու համար: Եթե Դուք համապատասխանեք CBAS ստանալու պահանջներին, և մինչև 2012 թ. փետրվարի 29-ը ADHC-ի Ձեր կենտրոնին CBAS-ի սպասարկող դառնալու արտոնություն տրվի, ապա ADHC-ի ավարտից հետո Դուք կկարողանաք շարունակել սպասարկում ստանալ նույն կենտրոնում: Եթե ADHC-ի Ձեր կենտրոնը CBAS-ի սպասարկող չդառնա, Ձեզ տեղեկություն կտրվի CBAS-ի այլ սպասարկողների մասին:

NOTICE OF CLASS ACTION SETTLEMENT AGREEMENT

(Ծանուցում խմբահայցի կապակցությամբ կայացված հաշտության համաձայնության մասին)

Darling et al. v. Douglas et al., C09-03798 SBA

11. Ի՞նչ տեղի կունենա, եթե ես չհամապատասխանեմ CBAS-ի պահանջներին

Եթե Դուք ADHC եք ստանում, բայց չեք համապատասխանում CBAS-ի պահանջներին, ապա Ձեզ «Գործի խորացված կառավարում» կտրամադրվի, որի օգնությամբ ADHC-ի ավարտից հետո Դուք կստանաք Ձեզ անհրաժեշտ բժշկական և սոցիալական ծառայությունները: Այս ծրագրի գործերի կառավարմամբ զբաղվող աշխատակիցները Ձեզ հետ կհամագործակցեն, որպեսզի Ձեր կարծիքը հաշվի առնվի այն հարցում, թե Դուք ինչ ծառայություններ եք ստանալու և ինչպես:

Դուք կկարողանաք ընտրել, թե ինչպես ստանալ «Գործի խորացված կառավարման» ծառայությունները՝ որպես սովորական «Medi-Cal»-ի ծառայություն, թե «Medi-Cal» կառավարվող բուժսպասարկման միջոցով:

12. Այս գործի համար ես փաստաբան ունե՞մ

Այո: Դատարանը «Disability Rights California»-ին, «National Senior Citizens Law Center»-ին, «National Health Law Program»-ին, «AARP Foundation Litigation»-ին և «Morrison & Foerster LLP»-ի փաստաբանական ընկերությանը լիազորել է ներկայացնելու Ձեզ և Խմբի այլ անդամներին: Փաստաբանները միասին կոչվում են Խմբի խորհուրդ: Այդ փաստաբանների ծառայությունների համար Դուք չեք վճարելու:

13. Ինչպե՞ս են վճարվելու փաստաբանները

Եթե Հաշտության համաձայնությունը հաստատվի, Պատասխանողները փաստաբանական ծառայությունների վարձը կվճարեն հայցվորների փաստաբաններին՝ այս դատական գործի հետ կապված նրանց աշխատանքի համար: Վճարվելիք գումարների չափը պետք է հաստատվի դատարանի կողմից: Հայցվորները և Պատասխանողները Դատարանին կխնդրեն հաստատել $2.2 միլիոնի չափով վարձատրությունը՝ վերջին 2-1/2 տարիների ընթացքում կատարված աշխատանքի համար: Բացի այդ, նրանք Դատարանին կխնդրեն հաստատել մինչև $400,000 վարձատրություն, որպեսզի Հայցվորների փաստաբանները հսկեն Հաշտության համաձայնության կատարումն առաջիկա 2-1/2 տարիների ընթացքում: Ձեզանից չի պահանջվում վճարել փաստաբաններին:

14. Հաշտության համաձայնության հարցում ընտրության ի՞նչ տարբերակներ կան

Դուք կարող եք ոչինչ չանել և կշարունակեք Խմբի անդամ մնալ: Դուք կարող եք նամակ գրել Դատարանին՝ դրանում նշելով պատճառները, թե ինչու Հաշտության համաձայնությունը Ձեզ դուր չի գալիս, և ուղարկել այն մինչև 2012 թ. հունվարի 10-ը: Եթե Դուք ցանկանում եք 2012 թ. հունվարի 24-ին ելույթ ունենալ «Fairness Hearing»-ի ժամանակ, ապա Դուք ՊԵՏՔ է այդ մասին նշեք Ձեր նամակում: Ձեր ելույթ ունենալու հարցը դատարանը կորոշի: Սակայն անպայման չէ, որ Դուք Դատարան ներկայանաք, որպեսզի 2012 թ. հունվարի 24-ին Դատարանը հաշվի առնի Ձեր առարկությունը:

15. Եթե Հաշտության համաձայնությունը հաստատվի, դա ի՞նչ է նշանակում

Եթե հաշտության համաձայնությունը հաստատվի, Դուք կկարողանաք կա՛մ CBAS, կամ «Գործի խորացված կառավարում» ստանալ՝ կախված Ձեր վիճակից: Դուք չեք կարող մեկ այլ դատավարության մասնակցել այն հարցով, թե արդյոք California-ն կարող է դադարեցնել «Medi-Cal»-ի ADHC-ի նպաստը:

NOTICE OF CLASS ACTION SETTLEMENT AGREEMENT

(Ծանուցում խմբահայցի կապակցությամբ կայացված հաշտության համաձայնության մասին)

Darling et al. v. Douglas et al., C09-03798 SBA

16. Ինչպե՞ս Դատարանին հայտնեմ, որ ինձ Դուր չի գալիս Հաշտության համաձայնությունը

Եթե Դուք Խմբի անդամ եք, Դուք կարող եք մինչև 2012 թ. հունվարի 10-ը նամակով Ձեր առարկությունները Դատարանին ուղարկելով Դատարանին հայտնել, որ համաձայն չեք Հաշտության համաձայնության կամ դրա որևէ մասի հետ: Դուք կարող եք նամակը գրել ինքներդ կամ փաստաբանի օգնությամբ՝ Ձեր հաշվին:

Ձեր առարկությունը ներկայացնելու համար Դուք պետք է նամակ ուղարկեք Դատարանին այն մասին, որ առարկություն ունեք, և բացատրեք Ձեր առարկության պատճառները: Նամակի վերևում նշեք Ձեր անունը, հասցեն, հեռախոսի համարը և գրեք «*Darling et al. v. Douglas et al.*, C09-03798 SBA»: Մի մոռացեք ստորագրել նամակը:

Նամակի բնօրինակն ուղարկեք Դատարանի գործավարին (Clerk of the Court), իսկ պատճեններն ուղարկեք կողմերի փաստաբաններին:Առարկության նամակները պետք է վերոնշյալ երեք հասցեատերերին ուղարկվեն ամենաուշը **2012 թ. հունվարի 10-ով** թվագրված փոստային կնիքով:

Clerk of the Court:	Attorneys for Class Members:	Attorneys for DHCS:
U.S. District Court 1301 Clay Street Oakland, CA 94612 Reference: *Darling et al. v. Douglas et al.*, Case No. C09-03798 SBA	Elissa Gershon Disability Rights California 1330 Broadway, Suite 500, Oakland, CA 94612 ATTN: *Darling v. Douglas*	Susan M. Carson Office of the Attorney General 455 Golden Gate Avenue, Suite 11000 San Francisco, CA 94102-7004

17. Ե՞րբ և որտե՞ղ է Դատարանը վճիռ կայացնելու Հաշտության համաձայնությունը հաստատելու կապակցությամբ

Հաշտության համաձայնությունը հաստատելու կապակցությամբ վճիռ կայացնելու նպատակով Դատարանը **2012 թ. հունվարի 24-ի ցերեկվա ժամը 1-ին** «Fairness Hearing» է անցկացնելու: Դատարանը քննելու է այն հարցը, թե արդյոք Հաշտության համաձայնությունն արդարացի է, հիմնավորված և բավարար: Դատավորը կլսի Խմբի այն անդամներին, ովքեր դատալսման ժամանակ խոսելու իրավունք են խնդրել: Դուք կարող եք ներկա գտնվել դատալսմանը, նույնիսկ եթե ելույթ ունենալու ցանկություն չունեք: Դատալսումը տեղի է ունենալու հետևյալ վայրում.

United States District Court
Northern District of California
1301 Clay Street
Courtroom 1, 4th Floor
Oakland, CA 94612

NOTICE OF CLASS ACTION SETTLEMENT AGREEMENT

(Ծանուցում խմբահայցի կապակցությամբ կայացված հաշտության համաձայնության մասին)

Darling et al. v. Douglas et al., C09-03798 SBA

18. Ի՞նչ տեղի կունենա, եթե ես ընդհանրապես ոչինչ չանեմ

Եթե Դուք ոչինչ չանեք, Դուք կշարունակեք Խմբի անդամ մնալ: Եթե այս Հաշտության համաձայնությունը հաստատվի, Դուք կկարողանաք CBAS կամ «Գործի խորացված կառավարում» ստանալ՝ կախված Ձեր վիճակից: Դուք չեք կարողանա մեկ այլ դատավարության մասնակցել այն հարցով, թե արդյոք California-ն կարող է դադարեցնել «Medi-Cal»-ի ADHC-ի նպաստը:

Ինչպես լրացուցիչ տեղեկություններ ստանալ

19. Ինչպե՞ս մանրամասներ ստանամ Հաշտության համաձայնության մասին:

Լրացուցիչ տեղեկություններ, Հաշտության համաձայնության օրինակը կամ Դատարանին առարկություն ներկայացնելու հարցում օգնություն ստանալու համար կարող եք դիմել «Disability Rights California»-ին՝

darling@disabilityrightsca.org	(888) 599-3921

20. Ինչպե՞ս տեղեկություններ ստանամ դատավարության մասին

Դատավարության մասին լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք ծանոթանալ դատական գործին, որը գտնվում է «Clerk of the U.S. District Court»-ի գրասենյակում՝ 17-րդ հարցում նշված հասցեով: Հաշտության համաձայնության ամբողջական տեքստը և այլ տեղեկություններ կարող եք ստանալ նաև հետևյալ հասցեներից.

- http://www.disabilityrightsca.org/advocacy/Darling-v-Douglas/index.html
  ԿԱՄ
- http://www.dhcs.ca.gov/services/medi-cal/Pages/ADHC/ADHC.aspx

21. Ինչպե՞ս այս ծանուցման օրինակը ստանամ այլ լեզուներով կամ սահմանափակ հնարավորություններ ունեցող անձանց պահանջները հաշվի առնող ձևաչափերով

Եթե այս ծանուցման օրինակը Ձեզ անհրաժեշտ է որևէ այլ լեզվով, եթե Դուք սահմանափակ հնարավորություններ ունեք, և ծանուցման օրինակը Ձեզ անհրաժեշտ է որևէ այլընտրանքային ձևաչափով (օրինակ՝ Բրայլի տառատեսակներով կամ խոշորատառ տպագրությամբ) կամ եթե Ձեզ այս ծանուցման մասին հարցեր տալու այլընտրանքային միջոց է հարկավոր (օրինակ՝ նշանային լեզվի թարգմանիչ), Դուք կարող եք՝

- դիմել Հայցվորների փաստաբանին՝ «Disability Rights California»՝ (888) 599-3921 հեռախոսահամարով

  ԿԱՄ
- Այցելել «Disability Rights California»-ի կամ «DHCS»-ի կայքերը, որոնց հասցեները նշված են 20-րդ հարցում: